ՏԱԽ-երի ստեղծման գործընկերային համաձայնագիր
(համագործակցության հուշագիր)

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(ՄԱԶԾ «Դերակատարների տեղական հզորացում զարգացման նպատակով Լոռու և Տավուշի մարզերում» ծրագրի շրջանակներում)

---------- *(Անվանումը)*

Տեղական ակտիվ խումբ ստեղծելու մասին (ՏԱԽ)

Կնքված ---------- *(վայրը և ժամանակը)*

Սույն Տարածքային գործընկերության համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքվում է հետևյալ անդամների միջև.

1. (*Նշել կառույցի անվանումը, լիազոր ներկայացուցչի անուն, ազգանուն, հայրանունը*)
2.
3.
4.
5.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն Համաձայնագրի կողմերը, ներկայացնելով քաղաքացիական հասարակությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ ՏԻՄ-եր) և գործարար ոլորտը, ունենալով նույն նպատակները, պատրաստակամություն են հայտնում համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում՝ ուղղված համայնքների գյուղական տարածքների կայուն և ներառական սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ Լոռու և Տավուշի մարզերում Եվրոպական միության «ԱՌԱՋՆՈՐԴ» Համայնքի կողմից ղեկավարած տեղական զարգացման մոտեցումների փորձնական իրականացման միջոցով:

1.2. Սույն Համաձայնագիրն ուղղված է Կողմերի միջև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության շրջանակի, Տեղական ակտիվ խմբի (այսուհետ՝ ՏԱԽ) կառուցվածքի և կառավարման մոդելի սահմանմանը:

1.3. Կողմերը հայտարարում են, որ սույն Համաձայնագիրը կազմված է ԵՄ «ԱՌԱՋՆՈՐԴ» մոտեցման սահմանման չափանիշներին համապատասխան:

1.4. Կողմերը հայտարարում են, որ սույն Համաձայնագրով հաստատված ՏԱԽ տարածքն ընդգրկում է ստորև թվարկված վարչատարածքային միավորների ներքին սահմանները՝ _____ (յուրաքանչյուր համաձայնագրի դեպքում ենթակա է թվարկման) (այսուհետ՝ ՏԱԽ տարածք):

2. Նպատակ

2.1. Քաղաքացիական հասարակության, ՏԻՄ և գործարար ոլորտի ներկայացուցիչների միջև կնքվող սույն Համաձայնագրի նպատակն է ստեղծել _____ *(անուն)* ՏԱԽ:

3. Տևողություն

3.1. Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

4. Առարկա

4.1. _____ (անուն) ՏԱԽ-ի գործունեության հիմնական առարկան՝ ցուցաբերել աջակցություն ՏԱԽ տարածքում գտնվող բնակավայրերի տնտեսական և սոցիալական կայուն և ներառական զարգացմանը՝ օգտագործելով ՄԱԶԾ ծրագրի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Հայաստանի Հանրապետության կառավարության, ԵՄ և այլ գործընկերների կողմից ներկայումս և ապագայում իրականացվող տեղական զարգացման ծրագրերի շրջանակներում հասանելի միջոցները և գործիքները:

5. Առաքելություն

5.1. _____ (անուն) ՏԱԽ-ի առաքելությունն է՝ ՏԱԽ տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների (ներառյալ՝ կանանց, երեխաների, երիտասարդների, տարեցների, հատուկ կարիքներով անձանց, ազգային փոքրամասնությունների և այլն) կյանքի որակի բարձրացմանն ուղղված բոլոր հնարավոր իրավական միջոցների օգտագործումը՝ խթանելով ձեռներեցությունը, տնտեսական զարգացումը և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, բարձրացնելով ՏԱԽ-ի տարածքում գտնվող բնակավայրերի տեսանելիությունը, արժևորելով տեղական ավանդույթները, սովորույթները և աշխարհագրական գրավչությունը, բարձրացնելով սոցիալական ներառվածությունն ու ներգրավվածությունը, _____ (յուրաքանչյուր ՏԱԽ-ի պարագայում ենթակա է հավելյալ լրացման):

6. Սկզբունքներ

6.1. _____ (անուն) ՏԱԽ-ը հիմնադրվում է թափանցիկության, հաշվետվողականության, մատչելիության, հավասարության և ԵՄ «ԱՌԱՋՆՈՐԴ» և «Համայնքահեն տեղական զարգացում» հայեցակարգերի շրջանակներում կիրառվող հետևյալ սկզբունքերի հիման վրա.

- վարից վեր մոտեցում,
- տեղանքահեն մոտեցում,
- տեղական գործընկերություն,
- համագործակցություն,
- նորարարություն,
- ինտեգրված ռազմավարություն,
- կապերի հաստատում:

7. Գործառույթներ

7.1. _____ (անուն) ՏԱԽ-ն իրագործում է իր առաքելությունը ՏԱԽ համայնքահեն տեղական զարգացման ռազմավարության և միջոցառումների ծրագրի մասնակցային մշակման, հաստատման և իրականացման միջոցով՝ ապահովելով տեղական հասարակության բոլոր անդամների համար հավասար հնարավորություններ։

7.2. Ըստ այդմ, ՏԱԽ-ն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) տեղական դերակատարների՝ ծրագրեր մշակելու և իրականացնելու կարողությունների զարգացում, ներառյալ՝ ծրագրերի ղեկավարման կարողությունների խթանում,

բ) համայնքահեն տեղական զարգացման ռազմավարության մասնակցային մշակում,

գ) ի կատարումն համայնքահեն տեղական զարգացման ռազմավարության՝ իրականացվող ծրագրերի ընտրության վերաբերյալ որոշումների կայացման ոչ խտրական և թափանցիկ ընթացակարգերի և օբյեկտիվ չափորոշիչների մշակում՝ ուղղված շահերի բախման կանխարգելմանը և քաղաքացիական հասարակությանն ու գործարար հատվածին պատկանող՝ առնվազն 50% ձայների ապահովմանը,

դ) փոխկապակցվածության ապահովում տեղական զարգացման ռազմավարության և ընտրված ծրագրերի միջև, ապահովելով վերջիններիս առաջնահերթությունն՝ ըստ դրանց աջակցությանն՝ ուղղված ռազմավարության նպատակներին և թիրախներին,

ե) ծրագրերի հայտերի ներկայացման հայտարարությունների, ներառյալ՝ դրամաշնորհների տրամադրման ընթացակարգի (այդ թվում՝ ընտրության չափանիշների) մշակում և հրապարակում,

զ) ծրագրերի հայտերի դիմումների ստացում և գնահատում,

է) ծրագրերի ընտրության և տրամադրվող աջակցության չափի որոշումը։ Անհրաժեշտության դեպքում, նախքան ծրագրերի հաստատումը, դրանք քննարկվում են ֆինանսական աջակցություն ցուցաբերող կազմակերպությունների հետ,

ը) տեղական զարգացման ռազմավարության և ի կատարումն դրա իրականացվող ծրագրերի և գործողությունների մշտադիտարկում և գնահատում։

8. ՏԱԽ-ի անդամությունը, անդամների իրավունքները և պարտականությունները

8.1. ՏԱԽ-ի անդամ կարող են լինել քաղաքացիական հասարակությունը, գործարար ոլորտը և տեղական ինքնակառավարման մարմինը[1] ներկայացնող այն անձինք, որոնք առնվազն մեկ տարի բնակվում և/կամ գործունեությունն են ծավալում ՏԱԽ-ի սահմաններում, ստորագրել են սույն համաձայնագիրը և իրենց գործունեությամբ նպաստում են ՏԱԽ-ի նպատակների իրագործմանը։

8.2. ՏԱԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամներ կարող են լինել.

---

[1] Տեղական ինքնակառավարման մարմին եզրույթի ներքո հավասարապես հասկացվում է նաև տեղական հանրային իշխանությունը։

ա) պետական գրանցում ունեցող ՔՀԿ-ները՝ ՀԿ-ները և հիմնադրամները (բացառությամբ պետության և համայնքների կողմից հիմնադրած հիմնադրամների),

բ) ոչ ֆորմալ քաղաքացիական նախաձեռնությունները և համայնքային խմբերն ու ակումբները,

գ) ակադեմիական և կրթական հաստատությունները,[2]

դ) ՏԱԽ տարածքի բնակիչները:

8.3. ՏԱԽ-ի գործարար ոլորտը ներկայացնող անդամներ կարող են լինել.

ա) «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն գերփոքր հանդիսացող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը,

բ) «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն փոքր հանդիսացող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը:

գ) «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն միջին համարվող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

8.4. ՏԱԽ-ի ՏԻՄ ոլորտը ներկայացնող անդամներ կարող են լինել.

ա) համայնքները՝ հանձինս համայնքի ավագանու անդամների, համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի տեղակալի, համայնքի աշխատակազմի անդամների, համայնքային հիմնարկների և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների, համայնքերի կողմից հիմնադրած հիմնադրամների:

8.5. Գրավոր դիմումի համաձայն ՏԱԽ-ի անդամի ընդունելության մասին որոշումը կայացվում է ՏԱԽ-ի կառավարման խորհրդի կողմից՝ կառավարման խորհրդի առնվազն երեք անդամների գրավոր երաշխավորմամբ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է քաղաքացիական հասարակության, գործարար ոլորտի և ՏԻՄ-ի հատվածը:

---

[2] Ակադեմիական և կրթական հաստատությունները կարող են նաև լինել հանրային և մասնավոր:

8.6. ՏԱԽ-ը վարում է իր անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնում նրանց վերաբերյալ տվյալները: ՏԱԽ-ի անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները սահմանվում է ՏԱԽ-ի կառավարման խորհրդի կողմից:

8.7. ՏԱԽ-ի անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ ՏԱԽ-ի կառավարման խորհրդի՝ տվյալ անդամին ՏԱԽ-ի անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն համաձայնագրի 8.9 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, ինչպես նաև 8.2 և 8.3 կետերին այլևս չհամապատասպանելու պարագայում:

8.8. ՏԱԽ-ի անդամն իրավունք ունի՝

ա) իր ներկայացուցիչների միջոցով մասնակցել ՏԱԽ-ի կառավարմանը և վերահսկմանը,

բ) ՏԱԽ-ի գործունեության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր, ազատորեն արտահայտել սեփական տեսակետը, նախաձեռնել ծրագրեր՝ ուղղված ՏԱԽ-ի զարգացմանը, իրազեկ լինել ՏԱԽ-ի գործունեությանը, օգտվել ՏԱԽ-ի իրավական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից, դիմել ՏԱԽ-ի կողմից հայտարարված դրամաշնորհներին, մասնակցել դասընթացներին, անարգել դուրս գալ ՏԱԽ-ի անդամությունից:

8.9. ՏԱԽ-ի անդամը պարտավոր է.

ա) բարձր պահել և տարածել ՏԱԽ-ի արժեքները,

բ) մասնակցել և աջակցել ՏԱԽ-ի գործունեությանը,

գ) նպաստել ՏԱԽ-ի զարգացմանը,

դ) առանց ՏԱԽ-ի իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդես չգալ ՏԱԽ-ի անունից,

ե) գործել սույն համաձայնագրին համապատասխան,

զ) վճարել անդամավճար,

է) կատարել սույն համաձայնագրի պահանջները, ՏԱԽ-ի կառավարման մարմինների որոշումները:

8.10. ՏԱԽ-ի անդամը պատասխանատվություն չի կրում ՏԱԽ-ի կամ դրա անդամ այլ կազմակերպությունների պարտավորությունների համար, ինչպես նաև ՏԱԽ-ը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար:

9. ՏԱԽ-ի կառուցվածքն ու կառավարումը

9.1. ՏԱԽ-ի կառավարման կառուցվածքն է՝ համաժողովը, կառավարման խորհուրդը և քարտուղարությունը:

9.2. ՏԱԽ-ի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՏԱԽ-ի վերստուգիչ հանձնաժողովի կողմից:

9.3. Սույն Համաձայնագրի կնքումից հետո 60 օրվա ընթացքում Համաձայնագրի Կողմերը պարտավորվում են գումարել համաժողովի առաջին նիստը:

9.4. ՏԱԽ-ի բարձրագույն մարմինը նրա անդամների՝ քաղաքացիական հասարակության, գործարար ոլորտի և ՏԻՄ ներկայացուցիչներից կազմված համաժողովն է, որին պատկանում է ՏԱԽ-ի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

9.5. ՏԱԽ-ի համաժողովի մասնակիցների քվոտան հետևյալն է. քաղաքացիական հասարակության և գործարար ոլորտի ներկայացուցիչները ունեն առնվազն 50%+1 ձայնի իրավունք, իսկ ոչ ավել քան 49% ձայները պատկանում է ՏԻՄ ներկայացուցիչներին:

9.6. ՏԱԽ-ի կառավարման խորհուրդը որոշում է համաժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև համաժողովի օրակարգի նախագիծը և այդ մասին համաժողովի անցկացումից ոչ ուշ քան 10 օրացուցային օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցում է ՏԱԽ-ի անդամներին:

9.7. ՏԱԽ-ի համաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարին մեկ անգամ:

9.8. ՏԱԽ-ի արտահերթ համաժողով գումարվում է ՏԱԽ-ի կառավարման խորհրդի կողմից՝ ՏԱԽ-ի քարտուղարության, ՏԱԽ-ի կառավարման խորհրդի և ՏԱԽ-ի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում: Արտահերթ համաժողով հրավիրվում է հրավիրողի օրակարգով: ՏԱԽ-ի համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե ՏԱԽ-ի համաժողովին մասնակցում են ՏԱԽ-ի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են համաժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Հերթական կամ արտահերթ համաժողով գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

9.9. Համաժողովը.

ա) հաստատում է ՏԱԽ-ի կառավարման խորհրդի, վերստուգող հանձնաժողովի, քարտուղարության և ՏԱԽ այլ մարմինների աշխատակարգերը, կատարում է փոփոխություններ դրանցում և/կամ հաստատում է նոր կանոնակարգ և աշխատակարգեր,

բ) սույն համաձայնագրի 9.11 կետով կառավարման խորհրդի համար սահմանված թվակազմերից որոշում է կառավարման խորհրդի թվակազմը, ՏԱԽ անդամների կազմից, ըստ քաղաքացիական հասարակության, գործարար ոլորտի և ՏԻՄ ներկայացուցիչներից 1/3 համամասնությամբ կազմված քվոտայով 2 տարի ժամկետով ընտրում է կառավարման խորհրդի և 1 տարի ժամկետով վերստուգող հանձնաժողովի անդամներին, փոփոխում է կառավարման խորհրդի և վերստուգող հանձնաժողովի կազմերը, վաղաժամկետ դադարեցնում է կառավարման խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամների լիազորությունները,

գ) ՏԱԽ-ի պետական գրանցում ունեցող անդամների կազմից 3 տարի ժամկետով ընտրում է հաշվետու մարմին՝ քարտուղարություն, որը իրականացնում է ՏԱԽ-ի ընթացիկ վարչական և ֆինանսական գործունեության կառավարումը, ՏԱԽ-ի անունից հանդես է գալիս երրորդ անձանց հետ հարաբերություններում,

դ) հաստատում է ՏԱԽ-ի զարգացման ռազմավարությունը,

ե) հաստատում է ՏԱԽ-ի ամենամյա գործունեության և ֆինանսական հաշվետվությունները, որից հետո դրանք հրապարակվում են ՏԱԽ-ի վեբ կայքում (առկայության դեպքում) և սոցիալական ցանցի էջում,

զ) անհրաժեշտության դեպքում որոշում է կայացնում անցկացնել ՏԱԽ-ի արտաքին ֆինանսական աուդիտ և ընտրում է աուդիտորին,

է) որոշում է անդամավճարների չափերը և դրանց գանձման կարգը, սահմանում է ՏԱԽ-ի անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները, ինչպես նաև ՏԱԽ-ի անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը,

ը) դադարեցնում է ՏԱԽ-ի գործունեությունը:

9.10. Կառավարման խորհրդի իրավասությունները ներառում են ՏԱԽ ընթացիկ գործունեության կառավարման, այդ թվում՝ աջակցության ծրագրերի ընտրության և հաստատման, ինչպես նաև ՏԱԽ կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

9.11. Կառավարման խորհրդի անդամները ընտրվում են համաժողովի կողմից: Կառավարման խորհրդի կազմը բաղկացած է 6 կամ 9 անձանցից, որոնք ներկայացնում են ՏԱԽ-ը կազմող երեք հատվածները և առաջադրվում են վերջիններիս կողմից: ՏԱԽ-ի բոլոր երեք հատվածները՝ քաղաքացիական հասարակությունը, գործարար ոլորտը և ՏԻՄ ներկայացուցիչները առաջադրում են ՏԱԽ կառավարման խորհրդում իրենց ներկայացնող անդամներին՝ ըստ քաղաքացիական հասարակության, գործարար ոլորտի և ՏԻՄ ներկայացուցիչներից 1/3 համամասնությամբ որոշված քվոտայի: Կառավարման խորհրդում անդամի ընտրությունները կատարվում են ռոտացիայի սկզբունքով՝ հետևյալ կերպ.

ա) կառավարման խորհրդի կազմը 6 անձից բաղկացած լինելու դեպքում՝ երեք հատվածները ներկայացնող անդամներից 1-ական թեկնածու ընտրվում է 2 տարի ժամկետով, 1-ական թեկնածու՝ 1 տարի ժամկետով՝ 1-ին տարում պաշտոնավարելու իրավունքով, 1-ական թեկնածու՝ 1 տարի ժամկետով՝ 2-րդ տարում պաշտոնավարելու իրավունքով: Յուրաքանչյուր անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց հետո ռոտացիայի հիման վրա համալրումը կատարվում է նույն հատվածը ներկայացնող այլ թեկնածուով,

բ) կառավարման խորհրդի կազմը 9 անձանցից բաղկացած լինելու դեպքում՝ երեք հատվածները ներկայացնող անդամներից 2-ական թեկնածու ընտրվում է 2 տարի ժամկետով, 1-ական թեկնածու՝ 1 տարի ժամկետով՝ 1-ին տարում պաշտոնավարելու իրավունքով, 1-ական թեկնածու՝ 1 տարի ժամկետով՝ 2-րդ տարում պաշտոնավարելու իրավունքով: Յուրաքանչյուր անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց հետո ռոտացիայի հիման վրա համալրումը կատարվում է նույն հատվածը ներկայացնող այլ թեկնածուով:

9.12. ՏԱԽ-ի անդամը կառավարման խորհրդում կարող է ընտրվել ոչ ավել քան երկու անգամ անընդմեջ:

9.13. ՏԱԽ-ի անդամը, որն ընտրվել է կառավարման խորհրդում, չի կարող միաժամանակ ընտրվել վերստուգող հանձնաժողովում:

9.14. Կառավարման խորհրդի նախագահը և քարտուղարը բաց քվեարկության միջոցով ընտրվում են խորհրդի անդամների կազմից՝ ինքնաառաջադրման կամ առաջադրման միջոցով: Նախագահը և քարտուղարը համարվում են ընտրված, եթե ստացել են Կառավարման խորհրդի անդամների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությունը:

9.15. Կառավարման խորհուրդն իր գործունեությունն կազմակերպում է նիստերի միջոցով՝ ամսական երկու անգամ: Կառավարման խորհրդի արտահերթ նիստ գումարվում է կառավարման խորհրդի նախագահի կողմից՝ կառավարման խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում: Կառավարման խորհրդի հերթական կամ արտահերթ նիստ գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

9.16. Կառավարման խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են կառավարման խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին՝ ՏԱԽ-ի բոլոր երեք հատվածների՝ քաղաքացիական հասարակության, գործարար և ՏԻՄ ոլորտներից յուրաքանչյուրից առնվազն 50% ներկայացուցիչների մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են ՏԱԽ-ի կառավարման խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվերակության միջոցով: Կառավարման խորհուրդը յուրաքանչյուր ծրագրային հայտի վերաբերյալ իրավասու է որոշում կայացնել միայն այն դեպքում, եթե ձայների առնվազն 50%-ը ձևավորվում է քաղաքացիական հասարակության և գործարար ոլորտի ներկայացուցիչների կողմից: Ձայների հավասարության դեպքում կառավարման խորհրդի նախագահի ձայնը համարվում է վճռորոշ: Կառավարման խորհրդի այն անդամները, որոնք ներկայացնում են ծրագրեր ներկայացրած կողմերին կամ առկա է շահերի բախման իրավիճակ, չեն մասնակցում որոշումների կայացման գործընթացին:

9.17. Կառավարման խորհուրդը.

ա) համարվում է ՏԱԽ-ի ղեկավար մարմինը ՏԱԽ-ի համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

բ) քննարկում և որոշումներ է կայացնում ՏԱԽ-ի գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են ՏԱԽ-ի համաժողովի իրավասությունների մեջ,

գ) քննարկում և հաստատում է ծրագրերի ընտրության քաղաքականությունը, ներառյալ՝ գնահատման չափանիշները առաջարկների ներկայացման հայտի հրապարակման փուլում,

դ) քարտուղարության կողմից հայտերի յուրաքանչյուր հավաքագրումից հետո գնահատում, ընտրում և ֆինանսավորման համար հաստատում է ծրագրերի հայտերը, որոնք համապատասխանում են ՏԱԽ տարածքի զարգացման ռազմավարության նպատակներին,

ե) նախապատրաստում և կազմակերպում է ՏԱԽ-ի համաժողովները,

զ) որոշում է կայացնում ՏԱԽ-ի անդամագրելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ, վարում է անդամների հաշվառումը, անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և տույժի միջոցներ,

է) որոշումներ է կայացնում ՏԱԽ-ի մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, աշխատանքային և տարածքային հանձնախմբեր, խորհրդակցական և այլ մարմիններ ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն համաձայնագրին, նշանակում և ազատում է դրանց համակարգողներին և պատասխանատուներին, վերջիններիս տալիս է լիազորագրեր,

ը) քննարկում և հաստատում է ՏԱԽ-ի կայունության և ֆինանսական պլանը, մոնիթորինգային ծրագիրը, տեսանելիության պլանը, շահերի բախման և էթիկայի ներքին կանոնակարգը, գործուղումների, հաշվապահական հաշվառման և գնումների քաղաքականությունները և այլ կորպորատիվ փաստաթղթեր,

թ) ընտրում է ՏԱԽ-ի հանձնաժողովների, աշխատանքային և տարածքային հանձնախմբերի, խորհրդակցական և այլ մարմինների անդամներին,

ժ) ընտրում է կառավարման խորհրդի նախագահին և քարտուղարին, վաղաժամկետ դադարեցնում է կառավարման խորհրդի նախագահի և քարտուղարի նրա լիազորությունները,

ժա) մշակում է ՏԱԽ-ի զարգացման ռազմավարությունը,

ժբ) ՏԱԽ-ի անունից ընդունում և հանդես է գալիս հայտարարություններով, հաշվետվություններով, կոչերով և դիտարկումներով:

9.18. Կառավարման խորհրդի նախագահը.

ա) հրավիրում և գումարում է կառավարման խորհրդի հերթական ու արտահերթ նիստերը,

բ) նախագահում է ՏԱԽ-ի համաժողովի և կառավարման խորհրդի նիստերը,

գ) ստորագրում է ՏԱԽ-ի համաժողովի և կառավարման խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը՝ այդ թվում նիստերի արձանագրությունները,

դ) ՏԱԽ-ի կառավարման խորհրդի նիստերի նախագահումը կարող է լիազորել կառավարման խորհրդի անդամ այլ անձի:

9.19. Կառավարման խորհրդի քարտուղարը.

ա) արձանագրում է ՏԱԽ-ի համաժողովի և կառավարման խորհրդի նիստերը,

բ) ստորագրում է ՏԱԽ-ի համաժողովի և կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունները:

9.20. Վերստուգող հանձնաժողովը մշտադիտարկում է ՏԱԽ-ի գործունեությունը, ներառյալ՝ վերահսկողություն է իրականացնում քարտուղարության և կառավարման խորհրդի կողմից ՏԱԽ-ի միջոցների օգտագործման նկատմամբ:

9.21. Վերստուգող հանձնաժողովի անդամները կարող են ընտրվել ոչ ավել քան երկու անգամ անընդմեջ: Վերստուգող հանձնաժողովը կազմված է 3 անդամից, որոնք միաժամանակ չեն կարող լինել ՏԱԽ-ի այլ մարմնի անդամ: Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, ընտրվում են հանձնաժողովի անդամների կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

9.22. Վերստուգող հանձնաժողովը իր գործունեությունն կազմակերպում է նիստերի միջոցով՝ ամսական մեկ անգամ: Վերստուգող հանձնաժողովի արտահերթ նիստ գումարվում է վերստուգող հանձնաժողովի նախագահի կողմից՝ վերստուգող հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում: Վերստուգող հանձնաժողովի հերթական կամ արտահերթ նիստ գումարվում է դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ:

9.23. Վերստուգող հանձնաժողովի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են վերստուգող հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են վերստուգող հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկության միջոցով:

9.24. Վերստուգող հանձնաժողովի նախագահը.

ա) ղեկավարում է վերստուգող հանձնաժողովի գործունեությունը,

բ) հրավիրում և գումարում է վերստուգող հանձնաժողովի հերթական ու արտահերթ նիստերը,

գ) նախագահում է վերստուգող հանձնաժողովի նիստերը,

դ) ստորագրում է վերստուգող հանձնաժողովի կողմից ընդունված փաստաթղթերը՝ այդ թվում նիստերի արձանագրությունները,

ե) վերստուգող հանձնաժողովի նիստերի նախագահումը կարող է լիազորել վերստուգող հանձնաժողովի անդամ այլ անձի:

9.25. Վերստուգող հանձնաժողովի քարտուղարը.

ա) արձանագրում է վերստուգող հանձնաժողովի նիստերը,

բ) ստորագրում է վերստուգող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

9.26. ՏԱԽ-ի ֆինանսական միջոցների օգտագործման աուդիտը տեղի է ունենում տարեկան առնվազն մեկ անգամ՝ համաձայն համաժողովի կողմից հաստատված ընթացակարգի:

9.27. Քարտուղարությունը պատասխանատու է ՏԱԽ-ի ընթացիկ գործունեության համար՝ վարչական և ֆինանսական հարցերի համար այլ մարմինների հետ իրավահարաբերություններում:

9.28. Քարտուղարությունը ընտրվում է մեկ անգամ վերընտրման հնարավորությամբ: Քարտուղարությունը ունի մինչև 5 անդամից բաղկացած աշխատակազմ, որի անդամները չեն կարող լինել ՏԱԽ-ի այլ մարմնի անդամ: Քարտուղարության աշխատանքները ղեկավարում է քարտուղարության համակարգողը:

9.29. Քարտուղարությունը.

ա) հանդիսանում է ՏԱԽ-ի հաշվետու մարմինը, իրականացնում է համաժողովի, կառավարման խորհրդի և վերստուգող հանձնաժողովի քարտուղարությունը,

բ) տնօրինում է ՏԱԽ-ի արխիվը, պահպանում է ծրագրային հայտերի և ընտրությունների արդյունքները,

գ) խթանում է ընտրված ծրագրերի ֆինանսավորումը, ներառյալ՝ դրանց ընտրության վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումները համապատասխան մարմնին ներկայացնելը,

դ) համակարգում է ՏԱԽ-ի կազմակերպչական աշխատանքները, այդ թվում ՏԱԽ-ին ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, հարաբերություններ է պահպանում այլ մարմինների հետ, ներառյալ՝ ղեկավարող և ֆինանսավորող մարմինները, ՏԱԽ-ի անունից իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնում է ՏԱԽ-ի կողմից պատրաստված առաջարկները և այլ փաստաթղթերը,

ե) նախաձեռնում և համակարգում է ՏԱԽ-ի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման աշխատանքները, ՏԱԽ-ի անդամներին տեղեկացնում է ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունների մասին,

զ) մշակում է ծրագրերի ընտրության քաղաքականությունը, ներառյալ՝ գնահատման չափանիշները առաջարկների ներկայացման հայտի հրապարակման փուլում,

է) հավաքագրում է ծրագրերի հայտերը և ներկայացնում է ՏԱԽ-ի կառավարման խորհրդին,

ը) վարում է ՏԱԽ-ի անդամների հաշվառումը, տվյալների թարմացումը, անդամության նոր դիմումներ ներկայացված հայտերի ռեեստրը,

թ) համաժողովի, կառավարման խորհրդի և վերստուգող հանձնաժողովի պահանջով վերջիններիս լիազորությունների իրականացմանն աջակցելու նպատակով ներգրավում է փորձագետների,

ժ) իրականացնում է այլ գործառույթներ կապված ՏԱԽ-երի գործունեության խթանման և համայնքահեն տեղական զարգացման պլանի իրականացման հետ,

ժա) ապահովում է ՏԱԽ-ի մարմինների աշխատանքների բնականոն ընթացքը և թափանցիկությունը:

10. ՏԱԽ-ի թափանցիկությունը և հաշվետվողականությունը

10.1. ՏԱԽ-ն ունի ներքին վերահսկողական համակարգ՝ հանձինս վերահսկող հանձնաժողովի, որը տարեկան հաշտվետվություններ է ներկայացնում համաժողովին:

10.2. Համաժողովն անհրաժեշտության դեպքում որոշում է կայացնում անցկացնել ՏԱԽ-ի արտաքին ֆինանսական աուդիտ:

10.3. ՏԱԽ-ն ունի արտաքին վերահսկողական համակարգ՝ վեբ կայք (առկայության դեպքում) և սոցիալական ցանցի էջ, որտեղ հրապարակվում են իր գործունեության տարեկան հաշվետվությունները, արտաքին ֆինանսական աուդիտի եզրակացությունները (առկայության դեպքում), դրամաշնորհային մրցույթների հայտարարությունները, ՏԱԽ քաղաքականությունները, ներառյալ՝ ծրագրերի ընտրության և գնահատման չափանիշները:

11. ՏԱԽ-ի գործունեության դադարեցումը

11.1. ՏԱԽ-ը կարող է դադարեցնել իր գործունեությունը ՏԱԽ-ի համաժողովի որոշմամբ, եթե այդ որոշմանը կողմ է ՏԱԽ-ի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

11.2. ՏԱԽ-ի գործունեության դադարեցումը անդամների համար պարտավորություններ չի առաջացնում:

12. Գաղտնիության քաղաքականություն

12.1. ՏԱԽ-ի անդամները ստորագրում են գաղտնիության համաձայնություն՝ իրենց գործունեության միջոցով ձեռք բերված ցանկացած տեղեկություն, ներառյալ՝ ստացված հայտերի վերաբերյալ, գաղտնի պահելու, երրորդ անձանց չտրամադրելու վերաբերյալ:

13. Համաձայնագրի փոփոխումը

13.1. Համաձայնագրում կատարվող փոփոխությունները իրականացում են Հավելվածի տեսքով՝ ստորագրված ՏԱԽ-ի բոլոր, ներառյալ՝ հիմնադրումից հետո միացած Կողմերի կողմից:

13.2. Սույն Համաձայնագրում չեն կարող փոփոխվել.

ա) ՏԱԽ-ի ստեղծման նպատակին և Համաձայնագրի առարկային վերաբերող նորմերը,

բ) ՏԱԽ-ի համաժողովի, կառավարման խորհրդի և վերստուգող հանձնաժողովի կազմում քաղաքացիական հասարակության, գործարար և ՏԻՄ ոլորտի ներկայացվածությունը սահմանող նորմերը:

գ) ՏԱԽ-ի կառավարման խորհրդում ծրագրերի ընտրության փուլում շահերի բախման իրավիճակը բացառող նորմը:

Կողմերը հավաստում են, որ ծանոթացել են սույն համաձայնագրին և ընդունել են այն:

Ստորագրման վայր և ժամանակ

Կողմերի տվյալներ

Ստորագրություն